

**Կապարի
համր**

MĀRIS BĒRZIŅŠ

*Svina
Garša*

Romāns

ՄԱՐԻՍ ԲԵՐԶԻՆԸ

Կապարի համր

վեպ

Թարգմանությունը լատվիերենից՝
Նաիրա Խաչատրյանի
Գոհար Ասլանյանի



ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.174-31 Բերդինշ
ԳՄԴ 84(4Լատ)-44
Բ 550

Բ 550 Բերդինշ Մարիս
Կապարի համը: Վեպ / Մ. Բերդինշ.- եր.: Newmag, 2023.-428 էջ:

Գրքում նկարագրվող իրադարձությունները կատվիայում տեղի են ունենում 1939-1941 թվականներին: Գլխավոր հերոսը Ռիզայի ծայրամասում ապրող երիտասարդ Մատին է: Երկրորդ աշխարհամարտի, Հոլոքոստի, քաղաքական ցնցումների պայմաններում նա փորձում է գլուխ հանել իր ապագայից, կանանց հետ քարոջ հարաբերություններից ու առհասարակ իր կյանքից:

Վեպը երիտասարդ, շարքային լատվիացու աչքով է ներկայացնում երկրի ու ամբողջ աշխարհի համար քախտորոշ իրադարձությունները: Մատինը հայտնվում է պատմության պտտահողմի ձագարում՝ երազելով պարզապես ապրել, աշխատել ու սիրել:

- Բոլորիս սպանելու են: Բոլորին:
- Չէ՛, հնարավոր չէ: Դու պատկերացնո՞ւմ ես, թե այստեղ քանիսն ենք. երեսուն հազար: Կարող են հարյուր կամ մի քանի հարյուր հոգու սպանել, եթե լրիվ խելքները թոցնեն, քայց ոչ այսքան շատ:
- Կարող են, կարող են: Օսմանները Մուշում միանգամից հինգ հազար հայ են այրել:
- Ո՞վ է հիմա հիշում հայերին...
- Ե՛ս եմ հիշում:
- Չգիտեմ, թե ոնց է եղել Մուշում, քայց չեմ հավատում, որ մեզ կայրեն: Եվ որտե՞ղ: Ռիզայում այդպիսի տեղ չկա, և դա շատ քարոջ գործ է:

ՀՏԴ 821.174-31 Բերդինշ
ԳՄԴ 84(4Լատ)-44

ISBN 978-9939-967-15-8
Մարիս Բերդինշ «Կապարի համը» © 2023, «Նյու Մեգ» ՄԴԸ
Māris Berziņš «Svina garša» © 2015

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՄԴԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:



Ministry of Culture
Republic of Latvia



STARPTAUTISKĀ RAKSTNIEKU
UN TULKOTĀJU NĀJA

This book was translated and published with the support of the Latvian Literature platform together with the Ministry of Culture of the Republic of Latvia and Ventspils Writers' and Translators' House.

Գիրքը թարգմանվել ու հրատարակվել է «Լատվիական գրականություն» հարթակի, Լատվիայի Հանրապետության մշակույթի նախարարության ու Գրողների և թարգմանիչների Վենտսպիլսի միջազգային տան աջակցությամբ:

Տորնյակալնսը՝ առաջ ու հիմա (հատված)

Անսիս Շտոկս

Կուզեի Տորնյակալնսն անվանել Ռիգայի ամենամարդասեր ծայրամասը: Այստեղ հոգ են տանում բոլոր թշվառականների մասին [...], ուշադրություն են դարձնում, որ երիտասարդ քաղաքացիներն առողջ և ուժեղ մեծանան: Ում միտքը խավարում է, նա հայտնվում է Շենֆելդի նյարդաբանական կլինիկայում (Վիեննիբա գատվեում): Անօգնական հիվանդներին հաճույքով ընդունում է Գիմնաստիկաս փողոցի կացարանը, իսկ գիշերը լուսացնող մյուս թափառականներին՝ Տելտս փողոցի կացարանը: Այստեղ հանդիպել եմ մարդկանց, որոնք Տորնյակալնսում ապրում են ծնված օրվանից և երջանիկ են, որ այստեղ ապրելու հնարավորությունից չեն զրկվել մինչև օրս, երբ արդեն անզոր են: Պատրաստ էին պատմել տորնյակալնսցիների երբեմնի ուրախ կյանքի մասին: Նշում էին լավ հայտնի հինգ իջևանատներ, որոնք ժամանակի ու հանգամանքների արդյունքում վերացել են: Դրանցից մի քանիսը քավականին հնչեղ անուններ են ունեցել, ինչպես օրինակ՝ «Ոսկե ձի»^{*} [-]:

Տորնյակալնսում մեծամասամբ լատվիացիներ են ապրում, ինչպես և Ռիգայի բոլոր արվարձաններում: Նրանցից շատերը փոքրիկ տնակների սեփականատերեր են և աշխատավորներ: Կյանքն այստեղ անաղմուկ է, օդը՝ ավելի մաքուր, քան Ռիգայում, և շատ ընտանիքներ տասնյակ տարիներ չեն լքում Տորնյակալնսը:

«Դարբա ձիվե» («Աշխատավորի կյանք»), հ. 28, 08.07.1939

Լիտվացիներին արգելվել է արտասահման տեղափոխվել (հատված)

LTA^{**}: Կաունաս, 26 օգոստոսի: Երեկ՝ կեսօրից հետո, Լիտվայի նախարարների կարիները պետության նախագահ Սմետոնասի ղեկավարությամբ

* Փողոց Ռիգա քաղաքում (Օանոթագրությունը՝ newmög-ի):

** «Ոսկե ձի» (լատվ. Zeltazirgs), Յանիս Ռայնիսի պիեսներից (1909) մեկն է՝ գրված երեխաների համար, որի հիմքում ընկած է ժողովրդական հեքիաթ՝ ապակյա դոլյակում յոթ տարի քնած արքայադստեր ու ոսկե ձիով ձիավորի մասին:

*** LTA, Լատվիայի պատմության մեջ առաջին ազգային լրատվական գործակալությունը: Ստեղծվել է 05.05.1920 թ-ին՝ Լատվիայի ժամանակավոր կառավարության որոշմամբ:

արտահերթ նիստ է հրավիրել: Նիստում քննարկվել է արդի միջազգային իրավիճակը: Այլ որոշումների շարքում կառավարությունը նաև որոշում է կայացրել մոտ ապագայում Լիտվայի քաղաքացիներին առանց լուրջ պատճառների արտասահման ելքի թույլտվություն չտալ: Ժամանակավորապես արգելվում են նաև գտնվելու վայրի փոփոխությունները Լիտվայի այն քաղաքացիներին, որոնք ավելի վաղ արտասահմանյան անձնագրեր և վիզաներ են ստացել:

«Կուրզեմենս վարդս» («Կուրզեմեի խոսք») հ. 193, 27.08.1939

Հայտարարություններ

Ներկարարներ են անհրաժեշտ Յուրմալաս գատվե 44, րև. 3, առ. ժ. 8:00, Ֆոգելս:

Ներկարարներ և շինարարներ. դիմել Վ. Վիզանտի արհեստանոց, Կր. Բարոնի փողոց 17, երեկոյան ժամը 5-6-ը:

Ներկարար՝ զոլեր քաշելու մասնագետ, դիմել Կոզլովսկուն, Գայզինյա փող. 3: Լավ վարձատրվող:

«Յաունակաս գինյաս» («Վերջին լուրեր»), հ. 194, 29.08.1939

— Դե ի՞նչ երիտասարդ պարոն Բիրկենս, մագլցի՞ր դեպի երկինք, – ամեն նոր վերանորոգում սկսելիս այսպիսի կամ նմանատիպ արտահայտություններով է ոգևորում ինձ Կոյան: Հերթական բնակարանի վերանորոգումն սկսելուն պես ես, վաղ առավոտից առաստաղներին թառած, գործ եմ անում: Մեր գործը միշտ վերևներից է սկսվում:

Վարպետ ներկարար Նիկոլայ Բրիսկորնին ոմանք նաև «Նիկ» են անվանում, բայց իրեն ավելի դուր է գալիս, երբ «Կոյա» են ասում: Ավելի հյութեղ ու կենսունակ է: Իմ կարծիքով՝ բոլորովին էլ լատվիերեն չի հնչում, բայց եթե տերն իր անունն այդպես է ուզում փոփոխել, ո՞վ կարող է առարկել: Կոյան անլուրջ վարպետ չէ, ոչ էլ ինչ-որ գլուխգովան: Մայրիկի մորաքրոջ տղան է, քեռիս ու ղեկավարս՝ մեկ անձում: Քեռի Կոյան, ինչպես մանկության օրերին էի նրան անվանում, քառասուն տարեկան է: Չէ՛, սխալվում եմ. ապրիլին լրացավ նրա քառասունմեկը, իսկ ղեկտեմբերին կլրանա իմ քսանչորսը: Չնայած մեր միջև տարիքային տարբերությունն անփոփոխ է, այնուամենայնիվ, ժամանակի հետ տարիքի ու խելքի տարբերությունը, չգիտես ինչպես, կրճատվել է: Գոնե ինձ այդպես է թվում: Սկսել եմ նրա մոտ աշխատել դպրոցից անմիջապես հետո՝ մինչև բանակում ծառայելը: Ստացվում է, որ եթե հաշվենք, մի երեք տարի կլինի, որ ներկարար եմ աշխատում: Մի անգամ նա ինձ ասաց. «Դու աշխատում ես ինձ հետ և ոչ թե ինձ մոտ: Տարբերությունը մեծ է, հասկանո՞ւմ ես»: Ես հասկանում եմ: Եվ գնահատում:

Համբերատարությամբ, առանց սկսնակի «ստեղծագործությունների» ու սխալների վրա ծիծաղելու, Կոլյան ինձ սովորեցրեց արհեստը: Միշտ նրա պես լավ չի ստացվում, բայց դե ոնց պետք է՝ ստացվում է. ես գիտեմ: Սա հաջողությունների միայն մի մասն է: Ապաշնորհ աշակերտից դարձել եմ ենթավարպետ: Սրա համար իմ հարգանքն ու մեծագույն շնորհակալությունը Կոլյային, և, իհարկե, պատկառանքն էլ նրա հանդեպ չի մարում: Այնպես չէ, թե անվերջ նրան եմ գովերգում, ինչպես սուրբ հրեշտակի. մեկ-մեկ կծու բառերով էլ ենք փոխանակվում, բայց մեծամասամբ իրար լավ ենք հասկանում, կարողանում ենք, ինչպես ասում են, լեզու գտնել և հարթել բոլոր սուր անկյուններն ու ծուռ գծերը: Կոլյայի տրամադրությունը կարուսելի պես փոփոխական է. մեկ կտեսնես՝ առավոտյան կգա, ինչպես ցեխոտ աշուն, ու քթի տակ կմրթմրթա, բայց մի ժամ չանցած՝ արդեն ծիծաղում է կամ էլ ամենաչնչին բաներից բարձրաձայն բողոքում, օրինակ՝ պատերից ոչ մի կերպ պոկվել չուզող հին պաստառներից: Նա կայծակնային արագությամբ է աշխատում, և դու՝ մահկանացուդ, չես հասկանում, թե ինչպես է նրան հաջողվում այդքան արագ, ճշգրիտ ու անթերի աշխատել:

Կոլյան մի խենթություն ունի: Հաճախ, իմ կարծիքով, չափից դուրս հաճախ վազում է Ալվինե մորաքրոջ մոտ՝ Զիեպինիեկկալնս՝ Օգնում է նրան հատկապես ամառները, երբ պետք է խոտ հնձել, ու նաև ձմեռները, երբ բակի, գոմի մուտքի ու արահետների ձյունը պետք է մաքրվի, որ միայնակ, բայց դեռ ուժը տեղը տանտիրուհին կարողանա սայլակով դուրս գալ ու կաթը հասցնել Կոկու փողոցի խանութ: Եվ էլի շատ ծանր գործեր, որոնք կինը չի կարող մենակ գլուխ բերել: Չէի ասի, թե լավ եմ ճանաչում նրան. մեկ-երկու անգամ տեսել եմ: Ես նրա վրա ատամ ունեմ. չեմ հասկանում՝ ինչու այդ կովերի մորաքույրն իր համար ծառա չի պահում, այլ անամոթաբար շահագործում է Կոլյային: Նրանց տարօրինակ հարաբերություններից գլուխ չեմ հանում: Կոլյան միայն պատմել է, որ Ալվինե մորաքրոջ որդին իր դպրոցական ընկերն է եղել, զոհվել է Լատվիայի ազատության համար պայքարում, իսկ ուրիշ հարազատներ մորաքույրը չունի: Օգնել է պետք: Հա՛, հա՛... Վարպետի գրեթե ամբողջ ազատ ժամանակն անցնում է՝ պառավին գոհացնելով, և, որքան հասկանում եմ, կամակոր կնոջ քմահաճությունները բավարարելով: Ներկարարություն անելու ընթացքում

* Թաղանթս Ռիզայի ծայրամասում:

հանդիպել եմ այդպիսիների: Հետաքրքիր է՝ ինչ կլինի, եթե կինն ուժասպառ լինի: Կոլյան ինչ կանի: Ես արդեն հիմա գիտեմ, թե ինչ կլինի. Կոլյան ավելի մեծ խնամքով կպարուրի նրան: Ալեհեր պառավին ծերանոցում ազնվորեն տեղավորելը Նիկոլայի խիղճը թույլ չի տա. ամոթ է ու անպատվություն, քանի որ այն կոչում են անկելանոց: Պետք է խոստովանեմ, որ ներսում չեմ եղել: Միայն Աստված գիտի՝ իրականում ինչպես է, բայց երբ պահը գա, ես նրան ասելու եմ, համարձակությունս հավաքելու եմ ու ասեմ, որ ծեր մարդկանց կացարանները պետությունն է հովանավորում, և արդարացիորեն ու հաստատ այնտեղ կյանքը վատ լինել չի կարող: Եթե ճիշտն ասենք, դեռ շուտ է բառեր շռայլելը. Ալվինե մորաքույրը շատ լավ վիճակում է: Իսկ եթե Կոլյան հույսե՛ր ունի՝ ժառանգություն ստանալու: Եթե այդպես է, ապա տեսարանը մի քիչ ավելի պարզ է դառնում... Ինչպե՛ս ավելի շուտ գլխի չէի ընկել:

Այնուամենայնիվ, Նիկոլային խղճում եմ, քանի որ հենց Ալվինե մորաքրոջ պատճառով նա երիտասարդ կանանց հետ... ես նույնիսկ չգիտեմ՝ ընդհանրապես կանանց հետ գործ ունենում է, թե ոչ: Կոլյայի կողմերում ոչ մեկին չեմ տեսել, դրա համար էլ պատկերը մշուշոտ է. ինչո՞ւ է տղամարդավարի պահվածքից խուսափում: Բայց գուցե նա այլևս չի էլ կարող: Արդեն բավական մեծ է: Հը՛մ, ինչ ասես, որ չկա: Մեկ-մեկ շատ եմ ուզում հարցնել, բայց մի տեսակ անհարմար է, և նա էլ հավանաբար միայն կծիծաղի ու կասի, որ շատ բան եմ ուզում իմանալ: Ավելի լավ է՝ լռեմ: Վերջիվերջո, դա Կոլյայի կյանքն է ու իմ գործը չէ. ինձ իմ խնդիրներն էլ բավական են: Աղջիկների հետ իմ գործերն էլ այնքան լավ չեն, բայց Նիկոլայի պես չեն, ինձ ավելի շուտ անատոմիական խնդիրներն են տանջում: Բայց դա լրիվ ուրիշ պատմություն է, և այդ մասին խոսելը ոչ մի ուրախություն էլ չի բերի:

Ծալովի սանդուղքին կանգնած՝ քերելով մաքրում եմ հաշվապահ Օսիսի քնակարանի առաստաղի սևացած ներկը: Տանտերը կնոջ ու փոքրիկ որդու հետ տեղափոխվել է բարեկամների մոտ՝ Ցեսվայնե, որպեսզի մեր ոտքերի տակ չընկնի: Սանդուղքի ամենավերևում մեխից կախել եմ գոլ ջրով դույլը, մեջը հաստ վրձինն եմ թրջում: Մերթընդմերթ վրձինս փոխարինում եմ սուր եզրով փոքր մածկաթիակով, որպեսզի թափվելիք նեղ շերտերը պոկվեն խորքից և հետո ծեփով ավելի հեշտ փակվեն: Այդ ընթացքում վարպետը խոհանոցում միացրել է սալօջախն ու ջուր տաքաց-

րել: Երբ Կոլյան մտնում է սենյակ, աչքի ծայրով նկատում են, որ ուռնու պես կուչ է եկած, ասես վատ եղանակից կծկված լինի:

— Այսօր տեսրդ այնքան էլ լավ չէ: Ի՞նչ է պատահել,- չէի ուզում քիթս խոթել, բայց չկարողացա ինձ զսպել:

— Չգիտեմ:

— Ի՞նչ չգիտես:

— Չգիտեմ՝ ինչ է կատարվում:

— Գուցե ե՛ս գիտեմ:

— Դո՛ւ,- Կոլյան կարճ ու զարմանքով լի հայացք է գցում վրաս,- չգիտեմ, գուցե՛ն գիտես:

— Բայց դա ի՞նչ է, որ ես... որ ես գուցե գիտեմ:

— Ես չգիտեմ...

Հյուանի սոսնձի փաթիլների վրա տաք ջուր լցնելով՝ Նիկոլայը, դույլի մոտ նստած, դանդաղ խառնում է գորշ եփուկը: Դեմքը չեն տեսնում, բայց նրա ծոծրակը միանշանակ վատ տրամադրություն է գուժում:

— Դուրս չի գալիս այս խառնաշփոթը եվրոպայում: Հասկանալի չէ՝ ոնց է ամեն ինչ կարգավորվելու... Դա վախեցնում է, հասկանո՞ւմ ես,- Կոլյան խոսելիս գլուխը չի թեքում:

— Հասկանում եմ, որ ոչինչ էլ պարզ չէ: Բայց մեզ ի՞նչ:

— Չգիտեմ: Այն օրը երազ տեսա: Պատերազմից հետո արդեն որերորդ տարին է՝ նույն տեսարանն է գալիս երազիս... Բայց այս անգամ մի այլ սարսափ էր:

Նա լռում է, մինչդեռ իմ ականջները հովվի շան ականջների պես ցցվել են:

— Կպատմե՛ն:

— Դե՛, ամեն անգամ՝ նույն երազը, նույն երազը... Նստած եմ տարեկանի դաշտում՝ զենքը ձեռքիս, կարգին վախեցած, մեկ էլ տեսնում եմ՝ տասնյակ կամ ավելի զինվորներ են մոտենում: Շարքով դաշտն են սանրում, ինձ են փնտրում, բայց անցնում են կողքովս ու չեն նկատում: Ես թեթևություն եմ զգում, ո՛րի՛ք... Բայց դա առաջ էր,- Կոլյան հոգոց է հանում ու շարունակում.- դժբախտաբար, այս անգամ ուրիշ էր: Զինվորներից մեկը, հասկերը սվինով այս ու այն կողմ տանելով ու հողը խոցելով, գալիս է ուղիղ վրաս: Այնպիսի սարսափազդու հայացքով է վրաս նայում, որ սիրտս չոքերս է ընկնում: Տնկվում եմ անկողնում: Փա՛ռք Աստծուն, մինչև նրա խոցելն

արթնացա, բայց մեջքս, միևնույն է, թաց էր: Մինչև առավոտ աչք չկայցրի: Ողնուղեղովս եմ զգում՝ սա բարի երազ չէ:

— Դե՛... երազը մնում է երազ: Մի անգամ լիքը ստամոքսով գնացի քնելու. ամբողջ գիշեր սարսափների մեջ էի:

— Ծիծաղո՞ւմ ես: Դե՛, ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր...

— Ի՞նչ ես ասում, ոչ մի դեպքում: Պարզել եմ ուզում... Բա այդպես չի՞ լինում: Եվ պետք չէ ամեն ինչ բառացիորեն ընդունել: Գուցե երազը, ասենք, նշանակում է...,- դու կտոր Ֆրոյդի ստեղծագործություններից քիչումիչ կարդացել եմ և շատ եմ ուզում հանգստացնել Կոլյային:

— Ի՞նչ ասենք:

— Դե՛, օրինակ՝ վախեր ունես, որ տանտերը մեր արած գործի հանդեպ քթիմազություն կանի: Այդ թվերի ծառաները սովորաբար ահավոր ժլատ ու հաշվենկատ են լինում:

— Վախեն՛ր: Դատարկ բաներ դուրս մի՛ տուր: Ես հենց հիմա քեզ մի բան ցույց կտամ:

Կոլյան հանում է գլխի՝ թերթից սարքած գլխարկը, հավաքում ձեռքերի մեջ, հետո բացում ծավաձքները, որպեսզի հնարավոր լինի կարդալ:

— Դու արդեն միայն խելացի գրքերի գործով ես, թերթեր հեչ չես կարդում,- ասում է նա:

Ինչո՞ւ է նա ինձ վիրավորում: Եթե քո մայրն էլ Ազգային գրադարանում աշխատեր, դու էլ ոտքի կանգնելուն պես ընթերցանությամբ պիտի տարված լինեիր: Այն էլ՝ կրկնակի եռանդով, քանի որ կողքիդ Վոլֆգանգը կա, որին չի հաջողվում գրախանութից դատարկ ձեռքով դուրս գալ: Ասես այնտեղի գրադարակների արանքում սիրեններ են երգում, թե գնի՛ր Մուպասան, գնի՛ր Ունդսեթ ու Բարդա...

— Էստեղ նայի՛ր՝ ինչ վերնագրերով է հեղեղված էջը,- Կոլյան վեր է կենում ու մոտենում սանդուղքին: - «Դալարյեն նիստի է հրավիրել զինված ուժերի գլխավոր հրամանատար Գամելենին»: Կարծում ես՝ նրանք այնտեղ՝ Ֆրանսիայում, հենց այնպե՛ս են նիստեր անում... Շարունակությունը տե՛ս՝ «Գերմանա-խորհրդային զրույցներն անցնում են մեծ գաղտնիության ներքո»: Ուրեմն ինչ-որ ֆոկուսներ կան, որ չեն ուզում աշխարհին ցույց տալ: Այս մեկն էլ՝ «Գերմանիան ավելի մեծ ակտիվություն կծավալի»: Տեսա՛ր: «Լոնդոնի բորսայում արժեքավոր թղթերի գինն ընկնում է»: Ինչո՞ւ է հանկարծ ընկնում: «Ինչպե՛ս են ֆինները բուժում իրենց ալկոհոլիկներին»... Մի բուպե, սա չէր:

Մինչ ես մի կերպ զսպում եմ ծիծաղս, Նիկոլայը թերթը դնում է իշոտնունկին.
 — Եվ սա միայն երեկ չէ առաջին օրվանն է: Քոնը տո՛ւր. դա պետք է երեկվանը լինի:

Չուզելով գլխիցս հանում եմ գլխարկս ու պարզում նրան.

— Կարդալ չի լինի, կավճոտվել է:

— Կլինի,- Կոլյան ձեռքով թափ է տալիս վրայի սպիտակ փոշին ու հարթում ծավված տեղերը: Նրա հայացքը մի վերնագրից մյուսին է ցատկում.
 - «Սլովակները հետ են պահանջում Լեհաստանին միացված հողերը»: Ո՞նց է, դուրդ գալի՞ս է: Հողերի համար իրար են ուտում... «Փոխհրաձգություններ լեհական և գերմանական սահմանապահների միջև»: Տե՛ս, արդեն իրար են մորթում... Ես քեզ ասում եմ՝ սա հեշտ ավարտ չի ունենալու,- Կոլյան այնքան անհանգստացած է, որ իմ մեջ էլ միտորային երանգ հայտնվեց: Առավոտվա լավ տրամադրությունս հողս ցնդեց, իսկ վարպետի հայացքը շարունակում է թափառել թերթի էջի վրայով: - Ահա, «Գերմանիա-ԽՍՀՄ պայմանագիրը բարենպաստ ազդեցություն կունենա Բալթիայի և Սկանդինավիայի երկրների անվտանգության հարցում: Բեռլինում համոզված են, որ Գերմանիայի և ԽՍՀՄ հարաբերություններում սպասվող քաղաքական շրջադարձը միայն դրական ազդեցություն կունենա նշված երկրների պետական անվտանգության վրա...»:

— Բա դա հե՛ջ: Ռուսաստանի ու Գերմանիայի միջև խաղաղության կղզիներ կլինենք,- մեջ եմ մտնում, քանի դեռ նա չի հասցրել աչքս մտցնել իր հոռետեսությունն ու եզրահանգումները. - շատ խելամիտ է նրանց կողմից և մեզ է՛լ օգուտ:

— Չէ՛ մի, պատմե՛ք խեղճիս, Դաուգավայի՛ ջրեր՝: Ֆրիցներին ես չեմ հավատում: Ռուսներին՝ նույնպես: Դու լսի՛ր,- Կոլյան շարունակում է կարդալ,
 - «Գերմանական համապատասխան շրջանակներում ընդգծում են անգլիական ու ֆրանսիական շատ թերթերի ծիծաղելի լուրերը, իբր Գերմանիայի և Խորհրդային Միության միջև ստորագրված չհարձակվելու մասին համաձայնագիրը Բալթիայի ու Սկանդինավիայի երկրների համար թաքնված վտանգներ ունի իր մեջ»: Այսպես են ասում գերմանացիները,

* «Պատմե՛ք խեղճիս, Դաուգավայի՛ ջրեր» (լատվ.՝ Stāsti manim, Daugavīša), լատվիական ժողովրդական երգից մի տող:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 